ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.05.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ թիվ ՍՑ-ԼՕ-2021/119 ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևանի քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Մ. Հովակիմյանի) թիվ ԵԴ/15569/02/21 քաղաքացիական գործի շրջանակներում հայցի ապահովման միջոց կիրառելու մասին 29.04.2021թ.-ին կայացված որոշումը, որով հայցի ապահովման նպատակով արգելվել է «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին և այլ անձանց «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելը, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.05.2021թ.-ի թիվ 26/26-1/6838-2021 գրությամբ «Տրանս-Սֆեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/119 ընթացակարգի քննությունը կասեցնել մինչև ԵԴ/15569/02/21 քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**